29
ԱՊՐԻԼԻ
2022

Luys Lnyu®

STOCKHOLM INTERNATIONAL PEACE RESEARCH INSTITUTE

ՄՆԱՑ Է ԹԱՔՆՎԱԾ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ (SIPRI) ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ

sipri

Ի՞ՆՉ Է ԹԱՔՆՎԱԾ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ (SIPRI) ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ

Վերջին օրերին Հայաստանի իշխանամերձ մամուլն[1] ու տելեգրամյան ալիքները[2], ինչպես նաև իշխող կուսակցության որոշ ներկայացուցիչներ[3], հղում կատարելով Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) Զենքերի փոխանցման ծրագրի տվյալների բազային, տարածում են տեղեկատվություն, թե իբր Փաշինյանի պաշտոնավարման 4 տարիներին ավելի շատ զենք է գնվել, քան երկրորդ և երրորդ նախագահներից յուրաքանչյուրի պաշտոնավարման 10 տարիների ընթացքում: Ուշագրավ է, որ սա առաջին դեպքը չէ, երբ իշխանությունները շահարկում են Ստոկհոլմի ինստիտուտի տվյալները՝ դրանք օգտագործելով ներքաղաքական նպատակներով. այսպես, 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններից առաջ ՔՊ նախընտրական ծրագիրը ներկայացնելիս վարչապետ Փաշինյանը, ակնհայտորեն հղում կատարելով SIPRI-ի տվյալներին, հայտարարում էր, թե «2011-2020թթ. ՀՀ սպառազինությունների ձեռքբերումների 62.7%-ը տեղի է ունեցել 2019-ին»[4]: Փորձենք հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) տվյալների բազան, որքանով են վերջինիս տվյալներն

---

[1] Հայաստանի որ ղեկավարի օրոք որքան գումար է ծախսվել սպառազինության վրա, 25.04.2022թ., https://www.araratnews.am/show/55477 (այցելվել է 27.04.2022թ.): 2018-2021 թվականներին Հայաստանը 280 մլն դոլարի զենք է ներկրել, 25.04.2022թ., https://radar.am/hy/news/social-2501954637/ (այցելվել է 27.04.2022թ.):

[2] Телеграм канал Баграмян 26, https://t.me/bagramyan26/37527 (այցելվել է 27.04.2022թ.):

[3] Հարցազրույց Հայկ Կոնջորյանի հետ, 26.04.20222., https://www.youtube.com/watch?v=AG_I01YDxMs&t=699s&ab_channel=%D4%BC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80 (այցելվել է 27.04.2022թ.):

[4] «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրի ներկայացում, 05.06.2021թ., https://www.youtube.com/watch?v=pbb9p6Sp-fM&ab_channel=%D4%BC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80 (այցելվել է 27.04.2022թ.):

արտահայտում սպառազինությունների ձեռքբերման իրական պատկերը, ինչ հետաքրքիր ցուցանիշներ են թաքնված այս տվյալներում:

Նախ նշենք, որ SIPRI-ի զենքերի փոխանցման ծրագրի գլխավոր չափորոշիչներից մեկն այն է, որ այնտեղ օգտագործվում են բաց աղբյուրները՝[5] պաշտոնական զեկույցներ, մամուլի և ռազմական ոլորտի մասնագիտացած պարբերականների հրապարակումներ, ՄԱԿ-ի զենքի ռեգիստր: Ակնհայտ է, որ զենքի միջազգային փոխանցման գործարքների մեծ մասն իրականացվում է փակ ռեժիմով, հետևաբար SIPRI-ի ներկայացրած տվյալները չեն կարող արտացոլել զենքի փոխանցման իրական պատկերը: Դրանցում ներկայացված է սպառազինության ներմուծման և արտահանման «միտում-ցուցանիշ արժեքը» (trend-indicator value, TIV)՝ ըստ մատակարարող երկրի և տարիների, որը SIPRI-ի կողմից մշակված միավոր է, որն արտացոլում է ոչ թե սպառազինության գինը, այլ դրա արժեքը (value)՝ համաձայն SIPRI-ի մեթոդաբանության: Հետևաբար հնարավոր չէ միանշանակ պնդել, որ գնային իմաստով այն համընկնում է սպառազինությունների դոլարային արժեքին: Ըստ SIPRI-ի պարզաբանման՝ «օգտագործվում են որպես չմշակված (raw) տվյալներ՝ որոշակի ժամանակահատվածում սպառազինությունների միջազգային փոխանցումների միտումները, մատակարարների և ստացողների համար գլոբալ տոկոսները և որոշակի պետություններ կամ երկրներ փոխանցումների ծավալի տոկոսները հաշվարկելու համար»[6]: Եթե նույնիսկ ենթադրենք, որ այդ միավորները համընկնում են սպառազինությունների դոլարային արժեքին, կստանանք շատ հետաքրքիր պատկեր:

Այսպես, եթե վերցնենք SIPRI-ի տվյալները, ապա 1993-1998թթ. Հայաստանը ներմուծել է 300 մլն դոլարի զենք՝ համապատասխանաբար 1993թ.՝ 2 մլն, 1994թ.՝ 181 մլն, 1995թ.՝ 47 մլն, 1996թ.՝ 70 մլն: Բոլոր ներկրումները եղել են ՌԴ-ից: Ակնհայտ է, որ SIPRI-ի տվյալները չեն արտացոլում Հայաստանի զենքի ներմուծման իրական պատկերը, դրանք ներառում են միայն այն տվյալները, որոնք հայտնի են դարձել նշված ինստիտուտին: Այլապես ստացվում է տարօրինակ իրավիճակ, ըստ որի՝ գտնվելով պատերազմում, Հայաստանը 1991-1993թթ. ընդամենը 2 մլն դոլարի զենք է ձեռք բերել, իսկ 1997-1998թթ. առհասարակ զենք չի գնել:

[5] SIPRI Arms Transfers Database – Methodology https://www.sipri.org/databases/armstransfers/background (այցելվել է 27.04.2022թ.):
[6] SIPRI Arms Transfers Database - Sources and methods, https://www.sipri.org/databases/armstransfers/sources-and-methods (այցելվել է 27.04.2022թ.):

Զենքի արտահանումը դեպի Հայաստան 1991-1998թթ.									
	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	ընդամենը
ՌԴ			2	181	47	70			300
ընդամենը			**2**	**181**	**47**	**70**			**300**
SIPRI-ի զենքի փոխանցման տվյալների բազա՝ https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php									

Ավելի ուշագրավ է 1999-2008թթ. պատկերը, որի համաձայն Հայաստանը այդ ժամանակաշրջանում ձեռք է բերել ընդամենը 121 մլն դոլարի զենք, ընդ որում՝ դրա 98%-ը ձեռք է բերել 1 տարում՝ 2004-ին, իսկ 1999-ին և 2007-ին ձեռք է բերել համապատասխանաբար 2 և 1 մլն դոլարի զենք: Իհարկե, անհավանական է, որ Հայաստանը 1997-2003թթ. ընդամենը 2 մլն դոլարի զենք ներմուծած լինի, այլապես ինչպե՞ս հնարավոր է բացատրել այդ ժամանակահատվածում Ադրբեջանի աննախադեպ զուսպ վարքագիծն ու սահմաններին ագրեսիայի և լարվածության բացակայությունը: Նույնը կարելի է ասել 2005-2008թթ. մասին: Ակնհայտ է, որ այդ տարիներին Հայաստանի զենքի մատակարարումը տեղի է ունեցել հիմնականում ոչ բաց ուղիներով, ինչի արդյունքում այդ տվյալները բացակայում են SIPRI-ի բազայից:

Զենքի արտահանումը դեպի Հայաստան 1999-2008թթ.											
	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	ընդամենը
Բելառուս									1		1
ՉԺՀ	2										2
ՌԴ						68					68
Սլովակիա						46					46
Ուկրաինա						4					4
ընդամենը	**2**					**118**			**1**		**121**
SIPRI-ի զենքի փոխանցման տվյալների բազա՝ https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php											

Ըստ նույն աղբյուրի՝ 2009-2018թթ. Հայաստանը ներմուծել է 247 մլն դոլարի զենք, որից միայն 110 մլն-ը՝ 2016-ին: Ստացվում է, որ Հայաստանը 2011-2015թթ. ընդամենը 21 մլն դոլարի զենք է ներմուծել, ինչը ակնհայտորեն անհավանական է, եթե հաշվի առնենք, որ նույն SIPRI-ի տվյալներով 2007-ի համեմատ 2018-ին ՀՀ պաշտպանական ծախսերն ավելացել են շուրջ 83%-ով՝ 280 մլն դոլարից հասնելով 513 մլն դոլարի[7]: Բացի այդ, նույն ժամանակաշրջանում Ադրբեջանը բավական ագրեսիվ

[7] SIPRI Military Expenditure Database, https://milex.sipri.org/sipri (այցելվել է 27.04.2022թ.):

վարքագիծ էր դրսևորում, վերջինիս ակտիվ զինման և ռազմական ծախսերի կտրուկ աճի հիմնական փուլն էր, հետևաբար հայկական կողմը չէր կարող համարժեք ծախսեր չկատարել: Այս առումով ուշագրավ է նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը, որ մինչև ապրիլյան իրադարձությունները Հայաստանը Ռուսաստանից ստացել է 50 հազար տոննայից ավելի անվճար ռազմատեխնիկական օժանդակություն[8]: Այսինքն՝ Հայաստանին հսկայական ծավալի անվճար զենք է մատակարարվել, ինչը, իհարկե, ներառված չէ SIPRI-ի բազայում:

Զենքի արտահանումը դեպի Հայաստան 2009-2018թթ.											
	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	ընդամենը
Չեռնոգորիա		2									2
ՌԴ	46	46	2		16			110	18		237
Ուկրաինա		4	4								7
ընդամենը	**46**	**52**	**5**		**16**			**110**	**18**		**247**
SIPRI-ի զենքի փոխանցման տվյալների բազա՝ https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php											

Ուշագրավ է, որ ՀՀ երրորդ նախագահի պաշտոնավարման ժամանակ միայն 2015-2017թթ. ՌԴ-ի հետ զենքի ներմուծման համար 300 մլն դոլարի վարկի պայմանավորվածություն է ձեռք բերվել (200+100), որի մատակարարումները սկսվել են 2016-ից հետո: Ընդ որում, այդ մատակարարումների մի մասը պետք է իրականացվեին 2018-2022թթ.: Այդ ծախսերը զուտ վարկային միջոցների հաշվին էին, հետևաբար դրանից զատ սպառազինության ներմուծումը շարունակվել է նաև պաշտպանական ծախսերի հաշվին: Այդ ընթացքում Հայաստանը ձեռք է բերել մի շարք գերժամանակակից համակարգեր: Փաստորեն, իրականում աննախադեպ քանակի սպառազինություն ՀՀ ԶՈՒ-ը սկսեց ձեռք բերել հենց 2015-2017-ին՝ ՌԴ-ի հետ կնքված 200 մլն դոլարի վարկի շրջանակներում և պաշտպանական ծախսերի ավելացման հաշվին: Ըստ ռազմական փորձագետների՝ միայն 200 մլն վարկի շրջանակներում ՀՀ ԶՈՒ-երը ձեռք են բերել այնպիսի զինատեսակներ, ինչպիսիք են 9Կ58 «Սմերչ» համակարգերը, «Իգլա-Ս» դյուրակիր ԶՀՀ-երը, ՏՕՍ-1Ա «Սոլնցեպյոկ» ծանր հրանետային համալիրը, 9Մ113Մ «Կոնկուրս» հակատանկային կառավարվող հրթիռներ, «Ավտոբազա-Մ» համալիր, ինչպես նաև այլ սպառազինություն և

[8] Սերժ Սարգսյանը պատասխանում է լրագրողների հարցերին՝ 80-ականների զենք, «HARDtalk», ՀՀ այլընտրանքային քայլեր, 19.08.2020թ., https://www.panorama.am/am/news/2020/08/19/%D5%8D-%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/2345918 (այցելվել է 27.04.2022թ.):

ավտոմոբիլային տեխնիկա:[9] Բացի այդ, ձեռք են բերվել նաև «Իսկանդեր» համակարգերը: Նախկին իշխանությունների ջանքերով ՌԴ-ի հետ կնքված մեկ այլ՝ 100 մլն դոլար արժեքով վարկային համաձայնագրի շրջանակներում Հայաստանը հնարավորություն ստացավ 2018-2022թթ. ընթացքում արտոնյալ պայմաններով ձեռք բերել սպառազինությունների նոր խմբաքանակ:[10] Այսինքն՝ մեծ մասամբ հենց այդ համաձայնագրի շնորհիվ են տեղի ունեցել վերջին տարիների սպառազինությունների «աննախադեպ» ձեռքբերումները, որոնք հիշատակելիս իշխանությունները մոռանում են նշել, թե երբ և ինչ պայմաններում են ստորագրվել հայտնի վարկային համաձայնագրերը:

Բացի այդ, արդեն հայտնի է, որ սպառազինությունների ձեռքբերումը մանրամասն նախատեսվել էր դեռևս 2017թ. ՊՆ և ԳՇ կողմից մշակված ու 2018թ. նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հաստատված՝ ԶՈՒ արդիականացման 2018-2024թթ. ծրագրով, սահմանված են եղել նաև սպառազինությունների գնման ֆինանսական աղբյուրները: Այսինքն՝ նոր կառավարությունը ուղղակի իրականացրել է նախկինում կնքված պայմանագրերը, երբեմն էլ, ըստ հրապարակված տեղեկությունների, անհարկի միջամտել դրանց ու չեղարկել մի շարք կարևոր գործարքներ: Օրինակ, Սերժ Սարգսյանը 2021թ. իր հարցազրույցներից մեկում նշել է, որ այդ պլանի համար նախատեսված էր 1 մլրդ 300 մլն դոլար, և այդ միջոցների աղբյուրները հստակորեն կային, 100 մլն-ը վարկային միջոցներով էին՝ յուրաքանչյուր տարի, 100 մլն-ը՝ այլ բյուջետային միջոցներով: 2018-2020 թվականների համար նախատեսված էր կեսից ավելին, ընդ որում՝ 1 մլրդ 300 մլն դոլարից 500 մլն-ից ավելին նախատեսված էր ավիացիայի, ՀՕՊ-ի և անօդաչու թռչող սարքերի կատարելագործման ու ձեռքբերման համար: Նախատեսված էր մինչև 2024 թվականը ձեռք բերել 2500 անօդաչու թռչող սարք, որոնք ձեռք չեն բերվել: Նախագահը նաև նշել է, որ գործող իշխանությունները փոխել են հակաօդային պաշտպանության «Տոր» համալիրներ ձեռք բերելու պլանը, որը նախատեսված էր երեք խմբաքանակով, ՀՀ-ն ստացել է միայն մեկ խմբաքանակ, այն էլ նախկին իշխանությունների ստորագրած պայմանագրով:[11] Փաստացիորեն, հայտնի չէ, թե նոր կառավարությունը սպառազինությունների ձեռքբերման ինչ նոր պայմանագրեր է ստորագրել,

[9] Հրապարակվել է Ռուսաստանի վարկով Հայաստանի պատվիրած զենքի ցուցակը, 18 փետրվարի 2016թ., https://razm.info/80419 (այցելվել է 27.04.2022թ.):

[10] Հայաստանը Ռուսաստանից 100 մլն դոլարի վարկ կվերցնի սպառազինության գնման նպատակով. նախագիծ, 12 հոկտեմբերի 2017թ., https://razm.info/113771 (այցելվել է 27.04.2022թ.):

[11] 2018-2020 թվականների համար նախատեսված էր ձեռք բերել հազարից ավելի հետախուզական և հարվածային անօդաչու թռչող սարք, բայց նոր իշխանությունները սպառազինության այդ պլանը փոխեցին. Սերժ Սարգսյան, 16.02.2021թ., https://www.tert.am/am/news/2021/02/16/Sargsyan/3526402 (այցելվել է 27.04.2022թ.):

բացառությամբ ՕՍԱ-ԱԿ համակարգերի և ՍՈՒ-30-ների պայմանագրերի, որոնք պատերազմի ժամանակ ցույց տվեցին իրենց անարդյունավետությունը: Ուշագրավ է, որ նույնիսկ SIPRI-ի տվյալների համաձայն՝ 2016թ. Ապրիլյան պատերազմից հետո 2 տարում՝ 2016-2017թթ. Հայաստանը ձեռք է բերել 128 մլն դոլարի զենք, ինչը վկայում է պատերազմից հետո սպառազինության համալրման ակտիվ ջանքերի մասին:

Ի վերջո, ըստ SIPRI-ի տվյալների բազայի, 2018-2021թթ. Հայաստանը ձեռք է բերել 280 մլն դոլարի զենք: Ուշագրավ է, որ դրանից 248 մլն-ը ձեռք է բերվել նախքան պատերազմը՝ 2019թ-ին, իսկ 44-օրյա պատերազմից հետո ձեռք է բերվել ընդամենը 32 մլն դոլարի զենք՝ Հնդկաստանից: Նախ, եթե հավատանք այս տվյալներին, ապա ստացվում է, որ 2018 և 2020թթ. (պատերազմի տարում) Հայաստանն առհասարակ զենք ձեռք չի բերել, ինչը նույնպես քիչ հավանական է, որովհետև հայտնի փաստ է, որ պատերազմի օրերին ՌԴ-ը Հայաստանին պարբերաբար զենք է մատակարարել: Այստեղ նույնպես գործ ունենք ոչ հրապարակային գործարքների հետ, ուստի պատահական չէ, որ ինչպես նախորդ ժամանակաշրջանում, այնպես էլ 2020-ի համար այս տվյալները դուրս են մնացել SIPRI-ի բազայից: Հետո ակնհայտ է, որ 2019-ի 248 մլն դոլարի մատակարարման գերակշռվող մասը 2015-2017թթ. ՌԴ հետ կնքված 200+100 մլն դոլարի սպառազինության վարկի շրջանակներում նախատեսված մատակարարումներն են, որոնց մի մասն ուղղակի մատակարարվել է 2019-ին:

Զենքի արտահանումը դեպի Հայաստան 2018-2021թթ.					
	2018	2019	2020	2021	ընդամենը
Հնդկաստան				32	32
Հորդանան		21			21
ՌԴ		228			228
ընդամենը		**248**		**32**	**280**
SIPRI-ի զենքի փոխանցման տվյալների բազա՝ https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php					

Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) Զենքերի փոխանցման ծրագրի տվյալների բազայի՝ Հայաստան զենքի ներմուծման 1991-2021թթ. ամբողջական պատկերը ներկայացված է ստորև.

TIV of arms exports to Armenia, 1991-2021

Figures are SIPRI Trend Indicator Values (TIVs) expressed in millions.

Figures may not add up due to the conventions of rounding.

A '0' indicates that the value of deliveries is less than 0.5m

For more information, see http://www.sipri.org/databases/armstransfers/sources-and-methods/

Source: SIPRI Arms Transfers Database

Generated: 26 April 2022

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	Total
Belarus																	1															1
China									2																							2
India																															32	32
Jordan																													21			21
Montenegro																				2												2
Russia			2	181	47	70								68					46	46	2		16			110	18		228			832
Slovakia														46																		46
Ukraine														4						4	4											11
Total			2	181	47	70			2					118			1		46	52	5		16			110	18		248		32	948

sipri

STOCKHOLM INTERNATIONAL PEACE RESEARCH INSTITUTE

[12]

SIPRI-ի զենքի փոխանցման ծրագրի տվյալների բազայի ուսումնասիրությունը՝ ըստ սպառազինության տեսակների, շատ ավելի հետաքրքիր պատկեր է ի ցույց դնում: Այսպես, երբ Հայաստանի ներմուծած զենքերը դիտարկում ենք ըստ կատեգորիաների, ստացվում է, որ 2018-2021թթ. ծախսված 280 մլն դոլարից 190-ը բաժին է ընկել ինքնաթիռներին: Ակնհայտ է, որ խոսքը հիմնականում տխրահռչակ ՍՈՒ-երի մասին է, որոնք այդպես էլ որևէ օգուտ չտվեցին մեր ԶՈՒ-ին: Եվս 21 մլն դոլար ծախսվել է Հորդանանից ներմուծումների վրա, ինչից կարելի է ենթադրել, որ խոսքը նույնչափ տխրահռչակ և կոռուպցիոն համբավ ունեցող 80-ականների ՕՍԱ-ԱԿԱ-ների մասին է:

Զենքի արտահանումը դեպի Հայաստան 2018-2021թթ.՝ ըստ տեսակների					
	2018	2019	2020	2021	ընդամենը
Ինքնաթիռ		190			190
ՀՕՊ համակարգեր		41			41
Հրթիռներ		17			17
Սենսորներ				32	32
Ընդամենը		248		32	280
SIPRI-ի զենքի փոխանցման տվյալների բազա՝ https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php					

Ավելին, SIPRI-ն հրապարակում է նաև զենքերի առուվաճառքի կնքված պայմանագրերի վերաբերյալ հայտնի տվյալները, համաձայն որի՝ 2019 թվականին

[12] SIPRI importer/exporter tiv tables https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php (այցելվել է 27.04.2022թ.):

Հայաստանը շուրջ 120 մլն դոլար է վճարել 4 հատ ՍՈՒ-30 կործանիչ ինքնաթիռների համար: Այսպիսով, համադրելով երկու տվյալները և հաշվի առնելով, որ, բացի ՍՈՒ-երից, տվյալ ժամանակաշրջանում ՀՀ կողմից այլ ինքնաթիռների գնման մասին տեղեկատվություն առկա չէ, կարող ենք եզրակացնել, որ 2018-2021թթ. ծախսված 280 մլն դոլարից 120-190 մլն-ը կամ 43-68%-ը ծախսվել է ՍՈՒ-երի վրա, որը որևէ օգուտ չի տվել Հայաստանին ո՛չ 44-օրյա պատերազմի, ո՛չ էլ դրանից հետո ադրբեջանական զորքերի ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժման և սահմանային բախումների ժամանակ:

Transfers of major weapons: Deals with deliveries or orders made for 2018 to 2021

Note: The 'No. delivered' and the 'Year(s) of deliveries' columns refer to all deliveries since the beginning of the contract. The 'Comments' column includes publicly reported information on the value of the deal. Information on the sources and methods used in the collection of the data, and explanations of the conventions, abbreviations and acronyms, can be found at URL <http://www.sipri.org/contents/armstrad/sources-and-methods>.

Source: SIPRI Arms Transfers Database

Information generated: 26 April 2022

Supplier/ recipient (R)	ordered	No. designation	Weapon description	Year(s) Weapon of order	Year delivery	of delivered	No. Comments
India							
R: Armenia	4	Swathi	arty locating radar	2020	2021	(4)	$40 m deal
Jordan							
R: Armenia	4	9K33 Osa	mobile SAM system	(2018)	2019	(4)	Second-hand; Osa-AK (SA-8B) version
		(120) 9M33	SAM	(2018)		2019	(120) Second-hand; for Osa-AK (SA-8B) SAM systems
Russia							
R: Armenia	(50)	9M338	SAM	(2018)	2019	(50)	
		(2) Tor-M1	Mobile SAM system		(2018)	2019	(2) Tor-M2KM version
		4 Su-30K	FGA aircraft		2019	2019	4 $120 m deal; Su-30SM version
		(4) Mi-8MT/Mi-17	transport helicopter		(2020)		Armed Mi-8MTV-5 version; delivery planned 2022

[13]

Ինչպես նշվեց, 2019-ին Հորդանանից ներմուծվել է 21 մլն դոլարի զենք, իսկ արդեն կնքած պայմանագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոսքը ՕՍԱ-ԱԿ-ների մասին է (Second-hand; Osa-AK (SA-8B), որոնց պայմանագիրը կնքվել է 2018-ին: Այսինքն, եթե հիմնվենք SIPRI-ի տվյալների վրա, ստացվում է, որ նախքան 44-օրյա պատերազմը՝ 2018-2020թթ. ծախսված 248 մլն դոլարից 141-211 մլն-ը կամ 57-85%-ը (120-190 մլն-ը ուղղվել է ՍՈՒ-երին, ևս 21 մլն-ը ՕՍԱ-ԱԿ համակարգերին) եղել են անարդյունավետ: Ավելին, այստեղ ևս հաստատվում են նախագահ Սարգսյանի՝ հրապարակված այն տվյալները, որ «Տոր» համակարգերի նախատեսված 3 խմբաքանակը ձեռք չի բերվել. փակագծերում նշվում է 2 խմբաքանակի մասին, մինչդեռ SIPRI-ի բացատրության համաձայն փակագծերում

[13] SIPRI trade registers, Transfers of major weapons: Deals with deliveries or orders made for 2018 to 2021, Armenia https://armstrade.sipri.org/armstrade/page/trade_register.php (այցելվել է 27.04.2022թ.):

թվաքանակը նշվում է, եթե այդ համակարգերի մատակարարման մասին փաստերը հստակ չեն (Information concerning the…number delivered/produced figures are in brackets if the accuracy of the data is uncertain)[14]: Անգամ այդ ձեռքբերումներն էլ ամենայն հավանականությամբ եղել են դեռ 2015-2017թթ. նախկին իշխանությունների կողմից ՌԴ հետ կնքված վարկային համաձայնագրերի միջոցներից:

Ուշագրավ է, որ նույնիսկ ըստ SIPRI-ի ոչ ամբողջական տվյալների՝ ստացվում է, որ Հայաստանը 44-օրյա կործանարար պատերազմից հետո, երբ կորցրել էր ահռելի սպառազինություն, ընդամենը 32 մլն դոլար է ծախսել սպառազինությունների ներկրման համար, այն էլ Հնդկաստանից սենսորների ներմուծման համար: Դա հնարավոր չէ համեմատել Ապրիլյան պատերազմից հետո ձեռքբերումների հետ, երբ չնայած կորուստներն անհամեմատ քիչ էին, սակայն ձեռք բերված սպառազինությունը, օրինակ՝ 2016-2017թթ. կազմել է 128 մլն դոլար: Այդ գնումները ներառել են հրթիռներ, հրետանի, զրահապատ մեքենաներ, որոնք բոլորը կիրառվել են 44-օրյա պատերազմի ժամանակ:

Զենքի արտահանումը դեպի Հայաստան Ապրիլյան պատերազմից հետո				
	2016	2017	2018	ընդամենը
ՌԴ	110	18		128
ընդամենը	110	18		128
SIPRI-ի զենքի փոխանցման տվյալների բազա՝ https://armstrade.sipri.org/armstrade/page/values.php				

Առհասարակ, նույնիսկ ըստ SIPRI-ի ոչ ամբողջական տվյալների՝ 2008-2018թթ. ՀՀ ԶՈՒ-ն ձեռք է բերել այնպիսի համակարգեր, ինչպիսիք են Ս-300 ՀՕՊ համակարգերը, «Իսկանդեր», «Սմերչ» համակարգերը, «Իգլա», «Վերբա», «Կոռնետ» և այլ համակարգեր, որոնց մեծ մասը կիրառվել է պատերազմի ժամանակ: 2008-2018թթ. սպառազինության գնումների վերաբերյալ SIPRI-ի տվյալները ներկայացված են ստորև.

[14] SIPRI Arms Transfers Database – Methodology, https://www.sipri.org/databases/armstransfers/background (այցելվել է 27.04.2022թ.):

Transfers of major weapons: Deals with deliveries or orders made for 2008 to 2018

Source: SIPRI Arms Transfers Database

Information generated: 26 April 2022

Supplier/ recipient (R)	ordered	No. designation	Weapon description	Year(s) Weapon of order	Year delivery	of delivered	No. Comments
Montenegro							
R: Armenia	(16)	D-30 122mm	towed gun	(2010)	2010	16	Second-hand
Russia							
R: Armenia	(144)	5V55U	SAM	(2007)	2009-2010	(144)	Second-hand
	(2)	S-300PS	SAM system			(2007)	2009-2010 (2) Second-hand
	(10)	Tigr	APV	(2010)		2011	(10) Possibly for police
	(200)	Igla-S	portable SAM			(2012)	2013 (200) Designation uncertain (reported as 'missiles')
	(25)	9M723	SSM	(2013)		2016	(25) For Iskander SSM system
	(4)	9P78 Iskander	SSM TEL			(2013)	2016 (4)
	1	T-90S	tank		2014	2016	1 Gift as price for Armenian tank crew coming 2nd place during Russian tank competition 2014
	(6)	BM-9A52 Smerch	self-propelled MRL			2015	2016-2017 (6)
	(200)	Igla-S	portable SAM			2015	2016 200
	(200)	Verba	portable SAM			2016	2016-2017 (200)
	(100)	Kornet	anti-tank missile			(2017)	2017 (100) Kornet-E version
Ukraine							
R: Armenia	(4)	L-39C Albatros	trainer aircraft	(2009)	2010-2011	4	Second-hand

[15]

Ավելորդ չէ վերջում կրկին ընդգծել, որ SIPRI-ի տվյալներն ամբողջական չեն, և դրա վրա հիմնվելով հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել ՀՀ սպառազինությունների ձեռքբերման վիճակագրության և ժամանակագրության մասին: Այսպես, SIPRI-ի տվյալների համաձայն՝ Հայաստանը 1991-2021թթ. ընդամենը 948 մլն դոլարի զենք է ներմուծել, այնինչ Ադրբեջանի նախագահ Ալիևը իր գրեթե յուրաքանչյուր ելույթի ժամանակ նշում է, որ իրենք պատերազմի ժամանակ ոչնչացրել են 4-5 մլրդ դոլարի զենք[16], իսկ ըստ տարբեր փորձագիտական գնահատականների՝ հայկական կողմի սպառազինության կորուստը գնահատվում է մինչև 2-3 մլրդ դոլար: Ակնհայտ է, որ ՀՀ ամբողջ զենքը Արցախում չի եղել և չի ոչնչացվել 44-օրյա պատերազմի ժամանակ, ինչից կարելի է եզրակացնել, որ 1991-2021թթ. Հայաստանը ներմուծել է առնվազն մի քանի անգամ ավելի շատ զենք, քան ներկայացված է SIPRI-ի տվյալների բազայում: Ավելին, ըստ նույն աղբյուրի, Ադրբեջանը 1991-2021թթ. ձեռք է բերել ընդամենը շուրջ 4,2 մլրդ դոլարի զենք, ինչը նույնպես ակնհայտորեն փոքր է իրական ցուցանիշից:

[15] SIPRI trade registers, Transfers of major weapons: Deals with deliveries or orders made for 2008 to 2018, Armenia https://armstrade.sipri.org/armstrade/page/trade_register.php (այցելվել է 27.04.2022թ.):

[16] В городе Шуша начал работу V Съезд азербайджанцев мира, Президент Ильхам Алиев выступил на Съезде с речью, Азертадж, 22.04.2022 https://azertag.az/ru/xeber/V_gorode_SHusha_nachal_rabotu_V_Sezd_azerbaidzhancev_mira__Prezident_Ilham_Aliev_vystupil_na_Sezde_s_rechyu_OBNOVLENO_3_VIDEO-2104985 (այցելվել է 27.04.2022թ.):

Առհասարակ, այս հարցում իշխանությունների շահարկումները չեն դիմանում որևէ քննադատության: Մի իշխանություն, որի օրոք Հայաստանը կորցրել է մի քանի միլիարդ դոլարի սպառազինություն, որը գրեթե ոչինչ չի անում այն արագ վերականգնելու համար, պետք է որ ընդհանրապես չանդրադառնար սպառազինությունների գնման գործընթացին: Ստեղծված ողբերգական վիճակի իրական պատկերը ավելի լավ պատկերացնելու համար հարկավոր է ուշադրություն դարձնել SIPRI-ի ռազմական ծախսերի տվյալների բազայի ցուցանիշներին[17]:

Հայաստանի և Ադրբեջանի ռազմական ծախսերը 2019-2021թթ. (մլն ԱՄՆ դոլար)			
	2019	2020	2021
Հայաստան	652	633.96	619.44
Ադրբեջան	1854.24	2237.76	2703.18
SIPRI-ի ռազմական ծախսերի տվյալների բազա՝ https://milex.sipri.org/sipri			

Այսպես, ըստ SIPRI-ի տվյալների՝ 44-օրյա պատերազմից հետո 2021-ին Ադրբեջանը իր ռազմական ծախսերը հասցրել է 2.703 մլրդ դոլարի, ինչը շուրջ 21%-ով ավելի է 2020-ի 2,237 մլրդ ցուցանիշից և շուրջ 46%-ով ավելի էր 2019-ի ցուցանիշից: Միաժամանակ, Հայաստանը 2021-ին ռազմական ծախսերը նվազեցրել է մինչև 619 մլն դոլար, ինչը շուրջ 2%-ով քիչ է 2020-ի ցուցանիշից և 5%-ով քիչ է 2019-ի ցուցանիշից: Այսպես, եթե 2019-ին ՀՀ ռազմական ծախսերը Ադրբեջանից քիչ էին 2,9 անգամ, ապա 2021-ին տարբերությունը կազմում է 4,3 անգամ: Եթե 2019-ին Ադրբեջանի ռազմական ծախսերը կազմում էին վերջինիս ՀՆԱ-ի 3,9%-ը, իսկ Հայաստանինը՝ ՀՆԱ-ի 4,8%-ը, ապա 2021-ին այդ ցուցանիշները կազմում են Ադրբեջանի դեպքում՝ ՀՆԱ-ի 5,3%-ը, ՀՀ դեպքում՝ ՀՆԱ-ի 4,4%-ը:

Սա անտրամաբանական պատկեր է, քանի որ ստացվում է, որ կործանարար պատերազմից և ահռելի կորուստներից հետո Հայաստանն իջեցնում է ռազմական ծախսերի իր բեռը, իսկ Ադրբեջանը, լինելով հաղթող կողմ և զավթելով հսկայածավալ հայկական ռազմատեխնիկա, այնուամենայնիվ ավելի է մեծացնում իր ծախսերը: Նույնիսկ ավելորդ է նշել, թե որքան գումար է հայկական կողմը նախորդ տասնամյակներին ծախսել Արցախում և Հայաստանում առաջնագծի կահավորման, մի քանի պաշտպանական գծերի ամրապնդման համար, և ինչպիսի խոցելի վիճակում է գտնվում առաջնագիծն այսօր:

[17] SIPRI Military Expenditure Database, https://milex.sipri.org/sipri (այցելվել է 27.04.2022թ.):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*